



Saints Joachim & Anne  
Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor  
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest  
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԶԻՆՅ. ՓԱՓԱՋԵԱՆ, ՀՈՎԻԼ

30 Դեկտ. 1991

Գերշ. Տ. Թաժակ Նոյս. Գաղսամեան,  
Առաջնորդ եւ Նախագահ Խեմական Խորհուրդի,  
ի նիւ Կոտի, Ն.Ս..

Սիրելի Արքագան,  
Ժխական Խորհուրդիս հերթական նիստին մէջ, որ կայացաւ 9 Դեկտ. 1991-ին,  
ի մէջ այլոց նկատի առնուեցաւ, Տարեվերջի առթիւ, յառաջիկային գումարուելիք՝  
եկեղեցւոյս Տարեկան ծխական ժողովին՝ ծխական Խորհուրդի դադարեալ անդամոց  
փոխան՝ նոր ընտրութեան համար ներկայացուելիք թեկնածուներու ցանկը: Այս  
առնչութեամբ խօսակցութեան առարկայ եղաւ ծխական Խորհուրդիս այժմու Ատենա-  
պետ՝ Տիար Կարպիս Մկրեանի պարագան, ըստ որում յիշեալը երեք յաջորդական  
շրջաններու համար իր ծառայութիւնը բերած է, իբրեւ Ատենապետ, վեց տարուայ  
պաշտօնավարութեամբ, եւ ուրեմն ըստ Խեմական Կանոնագրութեան՝ անիկա իրաւասու  
չէ վերստին անգամ իբրեւ թեկնածու ներկայանալ յառաջիկայի ընտրութեան:

Ժխական Խորհուրդս նկատի առնելով այս պարագան, յոյժ կարեւոր նկատեց որ՝  
Տիար Կարպիս Սկրեանի առի՞ւրտի՞ իբրեւ թեկնածու ներկայանալ, որպէս զի  
շրջան մը եւս անիկա կարողանայ ծառայել ծխական Խորհուրդիս կազմին մէջ,  
անշուշտ ընտրուելու պարագային:

Առ այդ, ծխական Խորհուրդս միաձայնութեամբ որոշում կայացուց՝ պաշտօնապէս  
դիմում կատարել Չերդ Արքագնութեան, իբրեւ նախագահ Խեմական Խորհուրդի, խըն-  
դրելով որ՝ բացառիկ կարգադրութեամբ արտօնութիւն շնորհուի մեզի որպէս զի  
մենք կարողանանք օրինաւորապէս Կարպիս Մկրեանի անունը գետեղել ընտրելինե-  
րու ցանկին վրայ, որմէ օգտուողը անկասկած՝ պիտի ըլլայ Ս. Յովակիմ եւ Աննա-  
յի փոքրաթիւ ծխական համայնքը:

Յուսալով ձեր բարւոջ տնօրինութեան,

Սնամբ Ողջունիւ Սիրոյ,  
Աղօթակից,  
*Ս. Տիրան Ա.Ք.Զ. Փափազեան*  
Տ. Տիրան Ա.Ք.Զ. Փափազեան, Հովիւ